

1178

151.7
<hr/>
5-18

1930

2010

* 2001

151.7

15-78

Պրոֆ. Ա. ՄԱԿՈՎԵԼՍԿԻ

Քարգանու թյունը
Խմբ. Հ. Գ. ՃԱՄԿՈՉՅԱՆԻ

ՄԱՆԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



2291

ԱՌՍԱԶԳԻՐՈՒԹՅՈՒՆ № 1
ՄԱՆԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բազու — Баку

1930

28022-57 ԿԿԶ

Տպագրված է ԱՂԻՊԵՏՀՐԱՏԻ տպարանում Բագու, Բ.-Մորակայա և Կրասնո-Պրեսնենսկ. փողոցների անկյուն:



10679-87

151.7
5-18

ՄԱՆԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌՁԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

ԻՆՁ Ե ՄԱՆԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մանկաբանության նույնիսկ կուրսանտին մանկաբանության, նրա նպատակի, առարկայի և նրա խնդիրների հետ, նրան տալ խորհրդային մանկաբանությունը ճանաչելու ուղղություն ղեկավար գաղափարներում և լուսարանել այն տարբերությունները, վոր գոյություն ունի խորհրդային մանկաբանության և մանուկն ուսումնասիրող մյուս ուղղությունների մեջ:

Յուրաքանչյուր աշխատավոր, իր գործի հաջողության տեսակետից, պետք է նախապես ճանաչի իր առարկաների հատկությունները, վորոնց մշակմամբ ինքն զբաղվում է: Որինակ՝ կոշիկակարը պետք է իմանա կաշվի հատկությունները և նրա զանազան տեսակների առանձնահատկությունները, հյուսնը պետք է ճանաչի փայտի հատկությունները և նրա տեսակների առանձնահատկությունների հետ: Նույնպես էլ մանկաբանը պիտի ճանաչի մանկան հասակի առանձնահատկությունները, վորպեսզի արդյունավետ լինի նրա աշխատանքները:

Վերջինս ուսումնական ժամանակ, ուժ և միջոցներ են կորչում աննպատակ, մեր դպրոցը մանկաբանության գիտության հետ ճանաչելու պատճառով: Յեթե մենք հաշվի առնենք հետախնայ աշակերտների թիվը, յերկրորդ տարեցիների խոշոր տոկոսը և այն հանգամանքը, թե վերջինս թույլ պատրաստություն են տալիս ավարտողներին և վերջինս հաճախ է դպրոցը այլանդակում աշակերտի անձնավորությունն ու հաշմանդամ դարձնում նրան՝ թե ֆիզիկապես, թե հոգեպես և թե բարոյապես, այն ժամանակ կհասկանանք մեր ուսուցչության մանկաբանական պատրաստության անհրաժեշտության խոշոր նշանակությունը:

486

Վորպեսզի գյուղացին լավ բերք ստանա, նա պետք է ունենա՝ վոչ միայն լիարժեք սերմացու, այլև պետք է ծանոթ լինի հողի հետ և կարողանա պետք յեղածին պես վարվել նրա հետ (փափկացնել, պարարտացնել և այլն): Այդպես ել ուսուցիչը պետք է լավ իմանա վոչ միայն՝ ավանդելիք առարկան, այլև սովորող յերեխայի ընդունակություններն ու բնավորությունը (природу): Ուրեմն, ինչպես վոր հողն ուժասպառ է լինում անձիշտ ոգտագործելուց, այնպես ել սովորողների ուժերն են սպառվում, յերբ նրանց հետ անգիտակ կերպով են վարվում: Վորպեսզի դպրոցը՝ ամենաքիչ ժամանակ, միջոց և ուժ գործադրելով՝ ամենամեծ արդյունքի հասնի, և վորպեսզի դաստիարակությունն ու ուսուցումն ամենակարճ, ձիշտ և խնայող միջոցներով իր նպատակներին հասնի պետք է մանկաբանության ամբողջ աշխատանքներն ընթանան համաձայն մանկաբանության տվյալների:

Մանկաբանությունը հանդիսանում է մանկավարժության և տարբեր առարկաների դասավանդման մեթոդիկայի անհրաժեշտ հիմունքը (базис): Յերեխայի հասակի առանձնահատկությունները հաշվի չառնող մանկավարժությունը մշտապես լի յե լինում սխալներով և չհիմնավորված քմածին հավաստիացումներով, ուրեմն և նա գործնականում կլինի ապարդյուն և վոչ գիտական իր բովանդակությամբ:

Մանկաբանությունն այն գիտությունն է, վորը պարզվում է մանկան ուսումնասիրությամբ և հայտնաբերում է մանկան որդանիցմի և մանուկ անձնավորության յուրահատուկ կողմերը: Մանկաբանության նպատակն է մանկան հասակի ամբողջական ուսումնասիրությունը: Մանկաբանությունը դնում է մանկան հասակի կենսաբանական, սոցիոլոգիական և հոգեկան առանձնահատկությունները՝ վոչ թե առանձին-առանձին վերցրած, այլ նրանց ներքին կապի և փոխադարձ կախման մեջ: Նա համադրում է մանկան մասին յեղած բոլոր գիտելիքները, վորոնք լուսաբանում են նրա զարգացումը՝ ֆիզիկական, հոգեկան, սոցիոլոգիական կողմերից և ձգտում է մարդու աճող որդանիցմն ուսումնասիրել վորպես պսիխոֆիզիկական ամբողջություն, նաև վորպես արդյունք այն սոցիալական միջավայրի, վորի մեջ յերեխան աճում ու զարգանում է: Այսպիսով՝ մանկաբանությունն ամբողջական ու սինտետիկ (համադրված) ուսումնասիրություն է մանկան մասին:

Մանկան գիտական ուսումնասիրության սկիզբն ու մանկաբանության սկզբնավորությունը.

Մանկաբանությունը յերիտասարդ գիտություն է: Նա վերջնականապես ձևավորվեց միայն XX դարու սկզբներում: Մեծ մանկաբաններ՝ Ամոնս կոմենսկին, Ռուսսոն, Պետտալոցցին, Ուշինսկին և ուրիշները, վաղուց են արտահայտել այն միտքը, վոր մանկան հասակն առանձնահատուկ է իր մտավոր հուզական-կամային յուրահատկությամբ, վոր մանկավարժը պետք է ուսումնասիրի յերեխայի բնությունն ու հասակի յուրաքանչյուր աստիճանի առանձնահատկությունները և վոր՝ դաստիարակության սկզբունքները պետք է հիմնավորված լինին մանկան վարքագծի վրա: Այսպես թե այնպես յերեխաների սիստեմատիկ գիտական ուսումնասիրությունը սկսվել է միայն 1882 թվին, յերբ լույս տեսավ Պրեյերի «Յերեխայի հոգին» գիրքը: Սկզբներում յերեխայի ուսումնասիրությունը սինտետիկ (համադրված) բնավորություն չուներ, այլ յերեխայի կյանքի տարբեր կողմերն ուսումնասիրվում էին առանձին-առանձին գիտություններով: Բժիշկներն ուսումնասիրում էին յերեխայի մարմնական զարգացումը, մանկան հիվանդություններն ու պակասությունները. հոգեբաններն ուսումնասիրում էին յերեխայի խելքի, զգացմունքների և կամքի զարգացումը, նրանց վարքագծի առանձնահատկությունները և դաստիարակության մեթոդները. սոցիոլոգները և ազգագրագետները (этнологи) ուսումնասիրում էին յերեխայի վիճակը, իրենց ժամանակակից աշխատանքի պայմաններում, և յերեխաների կյանքը՝ կապված նրանց շրջապատող միջավայրի հետ: Չկար յերեխայի մասին ամբողջական մի գիտություն, վորն ուսումնասիրեր յերեխայի կյանքի վոչ թե առանձին-առանձին կողմերը, այլ այն ռեալ կապը և կոնկրետ ամբողջությունը, վորոնք ձևավորում են այդ բոլոր կողմերն իրենց փոխադարձ կախման մեջ: Մանկաբանության գաղափարը, վորպես մանկանը բոլոր կողմերից ուսումնասիրող սինտետիկ ամբողջական մի գիտություն, ծագել է Ամերիկայում և այդ գիտության հիմնադիրը յեղել է Ստենլի Խոլլը: Նա անց եր կացնում այն միտքը, վոր դպրոցը գոյություն ունի յերեխաների համար, ուրեմն և դպրոցի կենտրոնում պետք է գտնվի ինքը աշակերտն իր հարցապնդումներով ու պահանջներով և վոչ թե ուսումնական ծրագիրը: Ուսուցման ժամանակ ամենից առաջ պետք է ի նկատի ունենալ յերեխայի զարգացումը: Դասավանդման առարկաները արժեքավոր են միայն այնքան, վորքան նրանք նպաստում են յերեխայի զարգաց-

մանր. այդ պատճառով բացի իր ավանդելիք առարկան ճանաչելուց և իմանալուց, նա կարիք ունի նաև յերեխային ճանաչելու:

Յերեխան ճիշտ ճանաչելու գործում, Ստենլի Խոլլի կարծիքով, վոչինչ այնքան չի խանգարել, վորքան մանկան հոգեբանության, բնախոսության, սոցիոլոգիայի և իրական կյանքի մեջ, մինչև այժմ ել գոյութիւն ունեցող այն անթափանցելի պատնէշը, վորի հետևանքով յերեխայի ուսումնասիրութիւնը մինչև որս ել յեղել և վոչ կենսական, անպտուղ և գործնականին անկցող: Ստենլի Խոլլի շնորհիվ առաջ յեկած մանկաբանական շարժումը բարեփոխութիւններ մտցրեց Ամերիկայի դպրոցական գործում, նոր հիմքերի վրա դնելով այնտեղի մանկավարժութիւնը:

Այն ժամանակ, յերբ Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և մյուս յեր- նր Խ. Ս. Հ. Մ-ում. կրքներում (բացառութեամբ Բելգիայի) մանկաբանության գաղափարը լայն ընդունելութիւն չգտաւ և յերեխան առաջվա նման շարունակվում եր ուսումնասիրվել վորպես առարկա առանձին-առանձին գիտութիւններ, վորոնք անթափանցելի միջնապատով բաժանված են իրարից, Խ. Ս. Հ. Մ.-ում մենք ակնատես ենք մանկաբանության ծագվմանը, վորտեղ նա առաջին անգամ դառնում և մարքսիստական գիտական գիտակցութեամբ մատերիալիզմով և դիալեկտիկայով:

Նորհրդային մանկաբանութիւնը մշակում և այն հարցերը, վորոնց առաջ և քաշում խորհրդային մանկավարժական պրակտիկան և տալիս և գիտական հիմնավորումն մեր աշխատանքային դպրոցի մանկավարժական աշխատանքների մեթոդներին ու բովանդակութեանը: «Իստիարակչական պրոցեսը մատերիալիստական տեսակետից անըմբռնելի յե, ասում և ընկ. Լուսաչարսկին, յեթե նա հենված չե մանկաբանության վրա:

Մանկաբանութիւնն ուսումնասիրելով, թե ի՞նչ և յերեխան, ի՞նչ որենքներով և նա զարգանում, ի՞նչ մեթոդներով կարելի յե վորոշել նրա զարգացումը և ուղղութիւնն տալ նրան, այդ իսկ միջոցներով լուսաբանում և մեզ համար յեղած բոլոր արդյունավետ պրոցեսները մեջ, գուցե, ամենակարեւորը՝ նոր մարդ արտադրելու պրոցեսը: Հարկավոր և, վոր յուրաքանչյուր ուսուցչի ուղեղում ապրի, թեկուզ և փոքր բայց, բավականին ուժեղ մանկաբանը»: Հիմա քննենք մանկաբանության առարկան ու նրա խնդիրները:

Մանկական հասակի յուրահասկութիւններ.

ա. ֆիզիկական առանձնահատկութիւններ.

Առաջներում յերեխաների վրա նայում էլին վորպես հասակավոր մարդու մանրանկարի վրա, յենթադրելով, վոր յերեխաներն ամեն բանով նման են մեծերին և տարբերվում են նրանցից հասակի փոքրութեամբ և պակաս փորձառութեամբ: Յեվ միայն XIX դարու վերջում, յերբ սկսվեց մանկան ավելի խոր ու ճշգրիտ ուսումնասիրութիւնը, հաստատվեց, վոր յերեխան հասակավորի փոքր պատճենը չե, այլ մի առանձին գոյութիւն, իր մարմնի առանձնահատուկ կազմվածքով, գործարանների յուրաձև գործունեյութեամբ, յուրահատուկ հոգեկան վիճակով, առանձին վարքագծով և ապրելակերպով:

Կենդանական աշխարհում ել ձագերը յերբեմն ուժեղ կերպով տարբերվում են մեծերից: Վորպես որինակ կարող և ծառայել գորան ու շերեփուկը կամ թիթեռն ու նրա թրթուռը: Միջատը իր միագուշն, սողացող վիճակից քնած և կիսամեռ հարսնուկի անցնելը, նրանից հետո յեկ փայլուն և թռչկոտող թիթեռնիկ դառնալը թվում և վորպես հրաշալի կերպարանափոխութիւն (метаморфоза). վոչ միայն արտաքինն և փոխվել բոլորովին, այլ և նրա շարժողութիւնների բնույթը, սննդառութիւնն ու ապրելակերպը:

Մարդն ել իր զարգացման ընթացքում յենթակա յե մի շարք ձևափոխութիւնների (метаморфоза). մարդու մանկական հասակը տարբերվում և մեծերից վոչ միայն իր չափով, այլ և մարմնի կազմութեամբ, ֆիզիոլոգիական գործողութիւններով, հոգեկան հատկութիւններով և վարքագծով (характером поведения): Յերեխաները մեծերի հետ համեմատած՝ ունեն մարմնի մասերի տարբեր արտաքին ձև, այդ մասերի համեմատական տարբեր փոխհարաբերութիւն, նույնպես և որգանիղմի ներքին տարբեր կազմութիւն:

Յերեխայի կմախքն ևս տարբեր և մեծերի կմախքից: Նա ունի տարբեր մարմին և տարբեր արյուն: Նորածնի արյունն իր բնական բաղադրութեամբ այնքան ուժեղ կերպով և տարբերվում հասակավորի արյունից, վոր թվում և, թե մեր առաջ կենդանական բոլորովին ուրիշ տեսակի արյուն և: Անատոմիական (մորֆոլոգիական) տարբերութիւններից անբաժան, նա ունի բնախոսական (ֆիզիոլոգիական) տարբերութիւններ: Հասակավորը և յերեխան միանման չեն շնչում: Միատեսակ չե նաև արյան առաջ քալն ու արյան շրջանառութիւնը: Կերակրի մարսողութիւնն ըն-

դունակութիւնը մանկական հասակում և ավելի ուշ տարիներում, տարբերվում են միմյանցից ինչպես աստիճանով, նույնպես և բնույթով:

Շատ եյական է նաև ներգատման (секреция) գեղձերի սիւտեմի գործունեյության մեջ յեղող տարբերութիւնը, վորոնց ազդեցութիւնն որգանիզմի կենսական գործունեյության վրա չափազանց մեծ է: Յերեխայի և մեծի մկանային ապպարատի գործունեյութիւնն էլ տարբեր է: Տարբեր են նաև յերեխայի և հասակավորի արթնութիւնն ու քնի ռիթմը (ритм) և քնի խորութիւնն ու տևողութիւնը:

Այսպես ուրեմն յերեխայի ուտելը, շնչելը, քնելը և շարժվելը բոլորովին տարբեր են հասակավորներից: Ահագին տարբերութիւն կա մանկան և հասակավորի որգանիզմների մեջ թե կենսաբանական տոկոսութիւնն և թե արտաքին վնասակար ազդեցութիւններին ու հիվանդութիւններին հանդեպ որգանիզմի ընդհմագրութիւնն ուժի տեսակետից: Մանկան նյարդային համակարգութիւնը նույնպես ունի իր առանձնահատկութիւնները: Յերեխաների ուղեղը պարունակում է ջրի ավելի մեծ տոկոս, քան մեծերի ուղեղը: Յերեխայի նյարդային բջիջները տարբերվում են մեծերի նյարդային բջիջներից իր մեծութեամբ, կազմութիւնն ու բարդութեամբ:

Կարևոր տարբերութիւն կա նաև միելինի, (миэлин) դանդրիդների և խրոմատինի հատիկների մեջ: Ծնվելու ժամանակ գլխի ուղեղի նյարդաթելերը (волокна) միելինաթաղանթ չեն ունենում: Յերբ յերեխան աճում է, նրա զարգացման յուրաքանչյուր քայլը կախված է միելինի առաջ գալուց: Նայած թե նյարդաթելիկների վոր մասն է ծածկված միելինյան թաղանթով, ըստ այնմ էլ կարելի յե դատել, թե յերեխայի զարգացումը վորքան է առաջադիմել: Մեծ նշանակութիւն ունի նաև նյարդային ճյուղավորման աճումը: Նյարդային բջիջները սկզբում յերեւում են առանց ճյուղերի (դանդրիդային) և միայն աստիճանաբար են ճյուղավորվում: Նյարդային համակարգութիւնն զարգացման մեջ կարևոր գործոն է հանդիսանում նաև խրոմատինի հատիկների շատութիւնը, վորոնց ներկայութիւնը, կենդանի եյակի զարգացման հետ միասին ավելի նկատելի յե դառնում: Յերբ շան ձագը դեռ խարխափելով է շարժվում, չի կարող վազել և նայել, դրա պատճառը վոչ թե նրա ֆիզիկական անկարողութիւնն մեջ է, այլ նրանում, վոր նրա նյարդերը դեռ զուրկ են միելինից և չունին խրոմատինի հատիկների հարկավոր քանակութիւնը:

Յեթե այդքան մեծ է յերեխայի ու բ. Մանկան հասակի հոգեկան առանձնահատկութիւնը, ապա հասկանալի յե, վոր հոգեկան տեսակետից էլ նրանց մեջ յե-

ղած անջրպետը մեծ կլինի, վորովհետև մարդն իրենից ներկայացնում է ֆիզիկո-հոգեբանական մի անբաժանելի ամբողջութիւն և միայն վերացականորեն կարելի յե տարբերել ֆիզիկական ու հոգեկան գործողութիւնները, վորոնք եյակես անբաժանելի կերպով են միացած միմյանց հետ:

Վորքան քիչ նմանութիւններ ենք գտնում նորածնի, պատանու ու հասակավորի բնավորութիւնն և կենցաղի մեջ, յերբ նրանց համեմատում ենք իրար հետ. առաջինը փոքր, անոգնական, ծծկեր, քիչ շարժվող, նստելու, կանգնելու, քայլելու, իբ գլուխը պահելու մեջ անկարող, իր սնունդը կազմող կաթն ընդունելու մի մոմենտից մյուսը քնող. այն ինչ յերկրորդը՝ պատանին, անսպառ եներգիտյով, շարժումների արագութեամբ, բազմատեսակ հետաքրքրութիւններով լի, մի առարկայի գրավչութիւնից մի ուրիշ զբաղմունքի անցնող, և վերջապես աւանական հասակ ունեցողը՝ կազմակերպված հայացքներով և լիովին ձևավորված հետաքրքրութիւններով, վորոնք տարբերվում են կամքի կայունութեամբ և վորեւ մասնագիտական ասպարիզում կենտրոնացած աշխատունակութեամբ:

Համեմատելով մարդու ինքնութիւնը նրա զարգացման տարբեր շրջաններում, մենք տեսնում ենք, վոր չափազանցութիւն չի լինի, յեթե ասենք՝ նա ուրիշ մարդ է դարձել: Նրա խելքը, նրա բնավորութիւնը, նրա հետաքրքրութիւնը, նրա վերաբերմունքը դեպի իր շրջապատը փոխվել են: (Դրված միևնույն պայմաններում՝ նա տարբեր ձևով կենցաղմբունի և տարբեր ձևով կ'ործի):

«Յեթե», — ասում է Ֆորստերը, — մարդու յուրաքանչյուր շրջան (фаза) մարմնանար առանձին-առանձին մարդկանց մեջ, և բոլորին հնարավոր լինել ժողովել, ապա նրանք կներկայացնեն իրենցից չափազանց ալլազան մի խմբակ հակառակ հայացքներով և շուտով կցրվեյին, առանց ցանկանալու յերբեւ իրար նորից հանդիպել: Այն, թե ինչպես է յերեխան շրջապատող աշխարհը ներընդունում, ինչպես է հասկանում շրջապատող իրականութիւնը և իր վերաբերմունքը դեպի նա ինչպես է իմաստավորում, ինչպես է պատասխանում (реагирует) իր ստացած տպավորութիւններին, այդ բոլորը հիմնովին տարբերվում են հասակավորից:

Վորպեսզի որինակով լուսաբանենք մանկական հասակի հոգեկան յուրահատկությունները, բերենք Կոլիովի առակների յերեխաների վրա թողած բարոյական ազդեցութեան վերաբերյալ գիտողություններ: Յերբ յերեխաների համար կարգացվել և «Ազոափը ու ազվեսը» առակը, ընդ որի յիլ համակրանքն ազվեսի կողմն և յեղել: Նրանք հափշտակվել են նրանով: Նրանց թվացել և, վոր նա շատ խելոք և նուրբ կերպով և ծաղրել հիմար ազոափին: Սպասվող հետևանքը տեղի չի ունեցել (քծնութեան ու քրծնողի հանդեպ զզվանք): Նույնը և «Ճպուռն ու մրջյունը» առակի ժամանակ, յերեխաների կարեկցությունը գրավել և անհոգ ճպուռը, իսկ մոայլ ու տխուր մրջյունը նրանց զզվելի յե թվացել: Յեվ առակը նրանց կարծիքով ուղղված և յեղել մրջյունի ժլատութեան դեմ: Փոխանակ յերեխաներին դեպի աշխատանքը հարգանք ներշնչելու, առակը ներնչել և նրանց թեթև, անհոգ կյանքի գեղեցկություն:

Ընդհանրապես յերբ յերեխաները դատում են անկախ մեծերի հայացքների ազդեցությունից, հաճախ նրանց դատողությունները մեծերի կարծիքների հակապատկերն և ներկայացնում:

Հարցեք, Վորոնք մանկաբանութեան մեջ են մտնում.

Հենց մանկական հասակի բոլոր առանձնահատկությունների ուսումնասիրությունն և կազմում և մանկաբանութեան առարկան: Նրա առաջ զբված խնդիրները չափազանց ընդարձակ են: Մանկաբանությունը պետք և վերականգնի մանկան որդանիզմի և ինքնութեան զարգացման շրջանները (стадии), պարզաբանե այդ զարգացման որենքներն ու գործոնները (факторы), ուսումնասիրի մանկան հասակի առանձին շրջանների առանձնահատկությունները և նրանց համար մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական և հոգեկան ստանդարտ (стандарт) վորոշի, պարզի մանկական ինքնութեան տարբեր կողմի զարգացման որինաչափությունը (շարժողական—моторный, զգայարանական—сенсорный, իմացական—интеллектуальный, հուզական—эмоциональный, կամային—волевой և այլն), ուսումնասիրի մանկական կոլլեկտիվը և նրանց սոցիալական վարքի կոլլուցիան:

Մանկաբանությունը զբաղվում և նաև մանկական մասսայի տիպաբանական (типологический) ուսումնասիրութեամբ: Սրան և վերաբերում այսպիսի հարցեր, որինակ՝ յերեխաների զանազան

շինվածքի (конституция*) և բնավորությունների տարբերությունները, աղջիկների և տղաների զարգացման ընթացքի տարբերությունը, յերեխաների անհատականութեան տարբերությունը՝ կապված նրանց ձիրքավորման (одаренность) և պրոֆեսսիոնալ պիտանիութեան խնդրի հետ, քաղաքի և գյուղի յերեխաների տարբերությունը, սոցիալական տարբեր դասակարգերի յերեխաների տարբերությունը, տնտեսական, դասակարգային, սոցիալկենցաղային, սանիտարա-առողջապահական, արտադրական-աշխատանքային և կուլտուրական պայմանների ազդեցությունը յերեխաների վրա:

Մանկաբանությունն ուսումնասիրում և մանկական աշխատանքն ու հանդիստը, մանկական խաղը, մանկական նկարը, մանկական կիրոն, մանկական թատրոնը, մանկան սեռային վիճակը (сексуальность), մանկական պակասավորությունը, մանկական հանցագործությունը, մանկական անապաստանությունը և այլն: Վերջապես մանկաբանությունը հիմնված մանկան զարգացման որենքների ու գործոնների ուսումնասիրութեան վրա, փնտրում և յերեխայի կատարելագործման և դաստիարակութեան ճշգրիտ սխեմա կազմակերպելու ուղիները: Այդ նպատակին են ծառայում դաստիարակչական մեթոդների, ուսումնական ծրագրերի, դասավանդման մեթոդիկաների և մանկավարժական աշխատանքի մյուս ելիմենտների մանկաբանական անալիզները:

Մանկաբանությունը, վորպես յերիտասարդ գիտություն՝ այդ հարցերից շատերի ուսումնասիրությունը դեռ նոր և ձեռնարկել և նրանք դեռ սպասում են իրանց գիտական լուծմանը:

Խորհրդային մանկաբանութեան մեթոդը հանդիսանում և զիայնկատիկական մատերիալիզմը: Այն առաջնորդող գաղափարները, վորոնց մանկաբանությունը քաղում և զիայնկատիկական մատերիալիզմից հետևյալներն են. նյութը հանդիսանում և սկզբնական անժխտելի իրողություն: Անորոշանական բնությունը, որդանական աշխարհը և մարդկային հասարակությունը միևնույն նյութի զարգացման հետևողական աստիճաններն են: Բայց զիայնկատիկական մատերիալիզմը հակառակ մետաֆիզիկական մատերիալիզմի, վոր գիտակցությունն ամբողջ

*) Կոնստիտուցիա (конституция) ասելով մենք հասկանում ենք մարմնի կառուցվածքի և որդանիզմի գործունեյութեան այն առանձնահատկությունները, վորոնց հիման վրա մարդիկ բաժանվում են տիպերի, տարբերվելով միմյանցից իրենց վարք ու բարքով:

Չապես նույնացնում ե բնախոսական պրոցեսների հետ, անգիտանալով հոգեկան յերևույթների վորակական յուրահատկութունները,— չի նույնացնում գիտակցութունն ուղեղի ֆիզիկական պրոցեսների հետ: Նա ճանաչում ե գիտակցության իրական գոյությունը, համարելով այն նյութի ավելի բարձր զարգացած մի ձևի առանձնահատկությունը: Գիտակցությունը գոյություն ունի այնպես, ինչպես գոյություն ունի շարժողությունը. այսինքն վոչ թե ինքն իրա համար և անկախ, այլ վորպես նյութի հատկություն, վորպես նրա ֆունկցիան:

Դիալեկտիկական մատերիալիզմի այդ դրության համաձայն ել խորհրդային մանկաբանությունը կառուցվում ե պոսիտիվիկական միականության (МОНИЗМ) սկզբունքով, բացատրելով մանկական վարքը նրան հատուկ ֆիզիոլոգիական մեխանիզմներով (ներառելով նաև նյարդային գործունեյության բարձր մեխանիզմները). նա միաժամանակ հաշվի յե առնում նաև նրանցից անբաժան, բայց սպեցիֆիկ և սուբյեկտիվ կողմը՝ գիտակցությունը:

Դիալեկտիկական մատերիալիզմի յերկրորդ առանձնահատկությունը նրա ունեցած հայացքն ե իրականության վրա, վորպես անընդհատ փոփոխվող պրոցեսի: Անշարժ վոչինչ չկա: Ամեն ինչ գտնվում ե շարժողության և անընդհատ զարգացման մեջ: Այդ պատճառով զարգացման յուրաքանչյուր շրջան պետք ե ուսումնասիրվի իր յուրահատկության մեջ: Հենց մանկաբանության մեջ ել տիրապետում ե դրան լրիվ համապատասխանող դինամիկ տեսակետ, նա ուսումնասիրում ե մանկական որդանիզմի և յերեխայի ինքնության զարգացման պրոցեսների ժամանակահատվածները և մանկության զարգացման աստիճանների անդադրում միմյանց հաջորդումը, փոփոխությունների ընթացքը և աճման որևնքները: Նա յերեխայի հասակի զարգացման յուրաքանչյուր շրջանը ձգտում ե հասկանալ կյանքի մյուս շրջաններից նրա ունեցած տարբերության և ուրույնության բոլոր մոմենտներով:

Դիալեկտիկական մեթոդը պահանջում ե նաև բոլոր յերեվույթներն ուսումնասիրել նրանց փոխազդեցության և փոխազարձ կապի մեջ: «Կա միայն կոնկրետ ճշմարտություն» — սովբեցնում ե մեզ դիալեկտիկան: Դա նշանակում ե, վոր յուրաքանչյուր յերևույթ պատմականորեն պայմանավորված փաստ ե և յուրաքանչյուր առարկայի մասին պետք ե դատել այն պայմաններում, վորոնց մեջ նա կա: Ժամանակից ու տարածությունից դուրս յերեխա գոյություն չունի: Մենք պետք ե ուսումնասիրենք վոչ թե բոլոր ժամանակներին ու ժողովրդներին պատկանող մի

ինչ վոր վերացական (абстракт) յերեխայի, այլ վորոշ պատմական ժամանակաշրջանի յերեխայի, վորը պատկանում ե վորոշ սոցիալական դասակարգի և ունի վորոշ տարիք ու սեռ՝ սերված վորոշ ցեղից ու ազգությունից, վորն ունի մարմնական այս կամ այն շինվածքը (конституция) և ցայտուն բնավորություն, վորն ապրում ե այս կամ այն ֆիզիկական և սոցիալական միջավայրում: Այդ իսկ պատճառով, խորհրդային մանկաբանության մեջ, յերեխայի ուսումնասիրության գործում տիրապետում ե ամբողջական սինտետիկ մոտեցում: Նա ձգտում ե մանկան զարգացումը հասկանալ բոլոր պայմանների համադրությունից նրա ունեցած կախման մեջ, պայմաններ, վորոնց միջից անցնում ե այդ զարգացումը և մանկան բարք ու վարքը, յուրաքանչյուր գործողություն նա բացատրում ե կապված այն կոնկրետ դրության հետ, վորի մեջ նա կատարվել ե:

Դիալեկտիկայի մյուս առանձնահատկությունը հանդիսանում ե հակասության որևնքը և նրան շարժող ուժը: Հակասությունը կյանքի ընդհանուր որևնքն ե. առանց նրա չկա զարգացում ու հառաջադիմություն: Յուրաքանչյուր առաջախաղացում կատարվում ե գոյություն ունեցող հակասությունների պայքարի ճանապարհով: Զարգացման հակասությունը, հակամարտությունների և միջազեպերի ներկայությունը, վորոնք պայմանավորում են շարժման պրոցեսները, կրիլիսների անխուսափելիությունը, հավասարակշռությունը խախտող մոմենտները և ապա նույնը տարբեր հիմունքներով վերականգնելը,— այդ բոլորն անխուսափելիորեն գոյություն ունին նաև մանկաբանության մեջ:

Զարգացման համար անհրաժեշտ յեղող հակասությունների հետ միաժամանակ՝ դիալեկտիկայի մեջ գոյություն ունին, զարգացման ընթացքում, քանակը վորակի փոխվելու և թռիչքների որևնքները: Քանակի մեծացումն ու փոքրացումն ունին իրենց սահմանը, վորից անցնելու ժամանակ փոխվում ե առարկայի կամ յերևույթի վորակը: Նոր վորակի անցնելը թռիչք ե: Զարգացումն աստիճանական անընդմիջական եվոլյուցիա չե, այլ նրա ընթացքում փոփոխականության շղթան ընդհատվում ե մի շարք թռիչքներով: Զարգացման թռիչքային ընույթի վերաբերյալ որևնքն արդարանում ե նաև մանկաբանության մեջ:

Յերեխայի զարգացման ընթացքում գոյություն ունին ամբողջ որդանիզմի վերաշինման մոմենտներ, յերբ նա անցնում ե աճման մի նոր շրջան: Այդպես ե որինակ՝ արգանդային մանկությունից արտարգանդային մանկության անցնելը, ծննդաբերական ակտով մոր արգանդից բաժանվելը: Իր մութ, տաք, նեղ-

վածք, լուրի բանտից մանուկը միանգամից անցնում է ընդարձակ մի աշխարհ, վորտեղ յենթակա յե բազմազան գրգիռներին:

Յերեխայի որգանիզմի չափազանց ուժեղ վերաշինման պրոցես է տեղի ունենում նաև սեռական հասունության շրջանում: Առանձին գործարանների զարգացման և որգանիզմի ֆունկցիայի կամ անհատի առանձին ընդունակությունների ուսումնասիրության ժամանակ մենք տեսնում ենք, թե ինչպես այդ զարգացումը պատկերացնող սղեղը (КРИВАЯ), վորն աստիճանաբար ու սահուն կերպով է բարձրանում, հետո հանկարծական ուժեղ թռիչք է գործում: Ընդհանրապես յուրաքանչյուր զարգացման արդյունք պայմանավորված է զիգագններով:

Դիալեկտիկայի վերոհիշյալ տվյալներին անհրաժեշտ է ավելացնել նաև պատմական մատերիալիզմի հիմնական կանոնը. «Դիտակցությունը վորոշվում է կեցությամբ» այսինքն՝ արտադրության յեղանակները և նրանից բխող հասարակական փոխ-հարաբերությունները վորոշում են տվյալ հասարակության հոգեբանությունը, մտքերը, աշխարհահայացքը, մարդկանց կյանքի վերաբերյալ ունեցած հասկացողությունները, նրանց զգացմունքները և նրանց ամբողջ բարք ու վարքը: Յեվ խորհրդային մանկաբանության մեջ էլ շատ ակնբախ կերպով պարզվում է յերեխայի զարգացման վրա սոցիալական միջավայրի հսկայական ազդեցությունը և նրա վարքը սոցիալական պայմաններով պայմանավորված լինելը:

Տնտեսական և հասարակական միջավայրի փոփոխման հետ միասին, փոխվում է նաև յերեխաների վարքագիծը և յուրաքանչյուր յերեխայի վարքը կարելի յե բացատրել շրջապատող հասարակության դասակարգային հոգեբանության ֆոնի վրա:

Վերջապես մարքսիզմի առանձնահատկություններից մեկն էլ գիտության վերաբերյալ նրա ունեցած հայացքն է, ըստ վորում՝ նա գիտության վրա նայում է վոչ թե վորպես սոսկ իմացության (созерцание), իրականությունը ճանաչելու համար, այլ նաև վորպես ներգործող զենքի՝ այդ իրականությունը վերաստեղծելու համար: Համաձայն այդ հայացքի, տեսությունը (теория) ճիշտ է այնքան, վորքան նրա փոփոխվող դերը գործնական կյանքում արդարանում է. և տեսության արժեքը կայանում է նրանում, վոր նա ոգնում է հպատակեցնել մեզ ընտելյան տարերային ուժերը, վորոնց տիրապետելով մենք կերպարանափոխում ենք կյանքը: Յեվ խորհրդային մանկաբանության ամենատարժեքավոր մասը հանդիսանում է պեդոսեխնիկան. դա մանկա-

բանության այն մասն է, վոր տեսությունը գործադրում է նոր մարդ դաստիարակելու և մարդկային ցեղն ազնվացնելու կենսական գործնական խնդիրները լուծելու նպատակով:

Մանկաբանության հասուկ մեթոդներ. Այն դիտական հատուկ մեթոդները՝ վոր գործադրում է մանկաբանությունն իր զանազան պրոբլեմները լուծելու համար՝ շատ բազմազան են: Լուծելու յենթակա հարցերի ընույթից է կախված այս կամ այն մեթոդի ավելի նպատակահարմար և արդյունավետ լինելը: Մանկաբանությունը դիմում է նաև մի շարք ուրիշ մեթոդներին:

Ա) Անհասրեմ ուսումնասիրության մեթոդ. մի մեթոդ, վոր առանձին-առանձին յերեխաներին ուսումնասիրում է մանրաղըննին կերպով և հնարավորություն է տալիս հաշվի առնել նրա զարգացման բոլոր պայմանները և հետապնդել բոլոր ազդեցություններին՝ վորքան կարելի յե ճիշտ և լրիվ:

Բ) Ընդհանրացնող (генерализирующий) մեթոդ. վորը հնարավոր է դարձնում ուսումնասիրել մանկան վորոշ մասսա կամ խումբ՝ իր ամբողջության մեջ, ըստ վորում առանձին յերեխան հասկացվում է վորպես տվյալ շարքի միավոր:

Գ) Մանկաբանությունը կիրառում է նաև յերեխայի ամբողջական ուսումնասիրության մեթոդը. այսինքն՝ դիտողական մի մեթոդ, վոր յերեխայի բարք ու վարքն ուսումնասիրում է իր բնական միջավայրում, պայմանների կենսական բարդության մեջ: Բայց նա չի հրաժարվում նաև անալիտիկ ուսումնասիրությունից, յերբ մանկան առանձին ֆունկցիաները ճանաչվում են արհեստական փորձառական (эксперименталь) դրությամբ այնքան, վորքան այդ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս յերեխայի բարք ու վարքի առանձին կողմերի հասկացողությունը խորացնելու:

Մանկաբանությունն ոգտվում է նաև բնախոսական (ֆիզիոլոգիական) մեթոդից (այսպես ասած պայմանական օեֆլեքսների մեթոդ), վորը թույլ է տալիս պարզարանել յերեխայի մեխանիզմի նյութական հիմունքը:

Նա կիրառում է նաև հոգեբանական մեթոդը, վորը լուսարանում է յերեխաների գիտակցական կյանքը և նրանց վարքը, նպատակաձգուման և հասարակական բովանդակության տեսակետից:

Հոգեբանական մեթոդների մեջ, բացի դիտողական և լաբորատոր-էքսպերիմենտալ մեթոդներից, կարևոր նշանակություն

ունի տեսերի մերսըր, վորի միջոցով կատարվում է հոգեկան ընդունակութիւնները և գործունեութիւնները գիտական չափումը:

Մարդկային բարք ու վարքի, անգիտակցական գրավման և անգիտակցական գործոնների պարզաբանումը տալիս է պսիխոանալիսիկ մերսըր:

Այդ և մյուս մեթոդները, վորոնցով մանկաբանութիւնը ոգտվում է, բնութագծերը կտրվին այն ժամանակ, յերը կընենք այդ մեթոդներով լուծվող առանձին-առանձին հարցերը:

ՀԱՐՑԵՐ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ

Մտածեցիք յիկ մտակեցիք հետեւյալ հարցերը:

- 1) Ի՞նչով է տարբերվում մանկաբանութիւնը յերեխայի հոգեբանութիւնից:
- 2) Ի՞նչումն է կայանում խորհրդային և ամերիկական մանկաբանութիւն տարբերութիւնը:
- 3) Ի՞նչ է գիտելիտ. մատերիալիզմը և ի՞նչ ձևով է նրա սկզբունքները գործադրվում մանկաբանութիւն մեջ:
- 4) Ի՞նչ հարարերութիւն կա մանկաբանութիւն և մանկաւարժութիւն միջև, և ի՞նչ նշանակութիւն ունի ուսուցչի համար մանկաբանութիւնը:



աճ 15թ

1178

0025396

2013

« Ազգային գրադարան »



NL0025396

